ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

25 մայիսի 2018 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 (ինն) անդամներ:

Բացակա էին Հայկազ Բաղդասարյանը, Վարդան Սուքիասյանը:

<u>Ավագանու նիստին հրավիրված էին և մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի ղեկավարի հրավերով՝ համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը, Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը, Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Գևորգ Հայրապետյանը, համայնքի ղեկավարի օգնական Մերի Կարապետյանը, «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը, ինչպես նաև Բյուրեղավան բնակավայրի Ամառանոցային փողոցի բնակիչներ:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են ինը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը: Նիստն սկսվեց ժամը 16:00-ին:

Նա ներկայացրեց, որ ավագանու արտահերթ նիստը գումարվել է իր նախաձեռնությամբ՝ ելնելով ազգաբնակչության դժգոհությունից: Խնդիրը կապված է «Առողջ սունկ» ընկերության ատրադրության հետ է:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25 - Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 25-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)«Առողջ սունկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 42-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեց օրակարգի հարցի նախագիծը:

Մինչև օրակարգի հարցին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը ներկայացրեց հարցի պատմությունը:

Դեռևս 2013թվականից «Առողջ սունկ» ընկերությունը արտադրությունը տեղափոխել է Բյուրեղավանի վարչական տարածք: 2014թվականից սկսել է կոմպոստի արտադրությունը, որի արդյունքում գարշահոտություն է տարածվել, ինչը դժգոհություն է առաջացրել Բյուրեղավանի բնակիչների և հատկապես Ամառանոցային փողոցի ամառանոցատերերի կողմից: Նրանք տևական ժամանակ տարբեր ուղղություններով՝ և ղեկավար, և լիազոր մարմիններին դիմում-բողոքներ են հղել՝ ընկերության գործունեության դադարեցման պահանջով: Բնակչության, վերադաս կազմակերպությունների, լիազոր մարմինների ճնշումների արդյունքում ընկերությունում կատարվել են ներդրումներ՝ ֆիլտրացիոն համակարգը փոխելու համար, սակայն դա էլ ցանկալի արդյունք չի տվել:

Ելնելով հանրապետությունում ստեղծված իրավիճակից՝ այս տարի ևս կազմակերպվեցին բողոքի ակցիաներ ընկերության տարածքում և Բյուրեղավանի համայնքապետարանի վարչական շենքի դիմաց: Որոշվեց համայնքի ավագանու, բնակչության ու շահագրգիռ անձանց հետ քննարկել հարցը և բողոքի ձայնը ուղղել անձամբ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Լսեցին

«ԱՌՈՂՋ ՍՈՒՆԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի և, ելնելով Բյուրեղավան համայնքի բնակչության շահերից, նրանց կողմից բողոքի ակցիաների միջոցով առաջ քաշած Բյուրեղավան համայնքում «Առողջ սունկ» ընկերության գործունեության արդյունքում առաջացող տհաճ հոտի վերացման անհրաժեշտությունից՝ համայնքի ավագանին որոշում է

1.Ընդունել ուղերձ ուղղված Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հակոբ Բալասյանը ընթերցեց վարչապետին ուղղված համայնքի ավագանու ուղերձի նախագիծը.

Հավելված
Բյուրեղավան համայնքի ավագանու
2018 թվականի մայիսի 25-ի N 43-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

ՈՒՂԵՐՁ

Հարգարժան պարոն վարչապետ

Ելնելով Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան և Նուռնուս բնակավայրի բնակչության շահերից՝ դիմում ենք Ձեզ խնդրանքով՝

1. Հանձնարարել ՀՀ Բնապահպանության և Առողջապահության նախարարություններին՝ ուսումնասիրել <<Առողջ սունկ>> ընկերության գործունեության արդյունքում առաջացած արտանետումների ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա: Վնասական ազդեցությունների դեպքում անմիջապես կասեցնել ընկերության գործունեությունը:

2. Վտանգավոր ազդեցությունների բացակայության դեպքում, ելնելով կոմպոստի արտադրության կարևորությունից, ընկերության կողմից պետական բյուջեին վճարվող զգալի հարկերից և աշխատատեղերի պահպանման կարևորությունից, աջակցել ընկերության ղեկավարությանը այն տեղափոխելու բնակավայրերից հեռու այլ վայր՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տհաճ հոտի առկայությունը առաջացնում է ազգաբնակչության մշտական դժգոհությունը:

Մտքերի փոխանակություն և հարցեր զեկուցողին

Ելույթ ունեցավ Ամառանոցային փողոցի բնակիչ, մասնագիտությամբ կենսաբան *Լաուրա Վարդազարյանը*: Նա ներկայացրեց, որ որպես Կոտայքի մարզպետարանում ստեղծված հանձնաժողովի անդամ, ուսումնասիրել է բոլոր փաստաթղթերը, որոնց վրա «Առողջ սունկ» ընկերությունը հղում է կատարել, որ սանիտարահիգիենիկ նորմաները համապատասխանում են ՀՀ 245-71 նորմատիվին: Նա նշեց, որ խախտվել է մի շատ կարևոր կետ. ընկերության կոմպոստի արտադրության համար տրված գործունեության լիցենզիան տրվել է ՀՀ 245-71 նորմատիվ ակտի դյույթների խախտումներով.

1)Համաձայն նշված դրույթի 2-րդ կետի 2.4 ենթակետի՝ հստակ նշվում է, որ նման ձեռնարկությունները չպետք է տեղակայվեն գերակա քամիների վարդի ուղղությամբ, եթե այն տանում է դեպի բնակելի տներ: Այնինչ «Առողջ սունկ» ընկերության Բյուրեղավանի մասնաճյուղի «Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ» փաստաթղթով նույնիսկ հստակ նշվում է, որ գերակա քամիների բույրը հյուսիս-արևելյան է, այսինքն՝ անմիջապես ազդում է ոչ միայն մոտակա տների, այլև Բյուրեղավան քաղաքի վրա, ինչը և հանդիսանում է խախտում նշված նորմի:

2)Ավելին՝ տվյալ արտադրության և բնակելի տարածքների միջև պետք է լինի 1000 մետր հեռավորություն, որը պետք է զբաղեցնի սանիտարա-պաշտպանիչ տարածք: Հատուկ դեպքերում այն կարող է հասնել մինչև 3000 մետրի, եթե գոյություն ունի անբարենպաստ քամիների բույր, ինչը նույնպես առկա է: Այս նորմը ամրագրված է կենդանական ծագումով թափոնների վերամշակման արտադրությունների համար նախատեսված 1 դասակարգման մեջ: Իրականում «Առողջ սունկ» ՍՊԸ-ի Բյուրեղավանի մասնաճյուղի հեռավորությունը բնակելի տներից սկսվում է մոտ 170 մետրից, նորմատիվ պահպանման դեպքում սանիտարա-պաշտպանիչ գոտին պետք է տատանվի Այգեգործական փողոցից մինչև Բյուրեղավան քաղաքի վերջ, Նոր Գեղի համայնք:

Նա նշեց, որ կարիք չկա նորից ստուգումներ ու չափումներ անելու ընկերությունում, քանի որ արդեն իսկ խախտում կա, այն է՝ բնակավայրին շատ մոտ գտնվելը: Հավելեց նաև, որ ոչ պաշտոնական տվյալներով ամիսկի պարունակությունը արտադրամասում 4000 անգամ գերազանցում է սահմանված նորմին:

Համայնքի ղեկավարը, լսելով Լ. Վարդազարյանին, առաջարկեց ուղերձի 1-ին կետը խմբագրել և նշել այն մասին, որ ընկերության կոմպոստի արտադրությունը պետք է լինի ՀՀ 245-71

նորմաներով, սակայն այն խախտվել է: Եվ եթե պարզվի, որ իրականում այդ նորմաներն են գործում, ապա անհապաղ դադարեցնել ընկերության գործունեությունը:

Նիստին ներկա բնակիչ *Ֆելիքս Մուշեղյանն* էլ առաջարկեց ուղերձին կցել հիմնավորող փաստաթղթերը: Նա պնդեց, որ եթե նորից որոշեն ստուգումներ անել, ապա պետք է արվի ոչ թե պատահական օր՝ նախապես զգուշացնելով ընկերությանը, ինչպես կատարվել է նախկինում, այլ աշխատեցնել արտադրությունը և տեղում չափումներ անել՝ բնակչության ներկայությամբ:

Հ. Բալասյանը հայտնեց, որ եթե մշտադիտարկումներ լինեն, ապա կարելի է հերթապահություն սահմանել այնպես, որ բնակիչները միշտ ներկա լինեն աշխատանքներին:

Բնակիչները բանավեճի բռնվեցին՝ ասելով որ ստուգումներն ու չափումները հարցին լուծում չեն տա:

Ելույթ ունեցավ Ամառանոցային զանգվածի բնակիչ, մասնագիտությամբ ճարտարապետ-շինարար *Արտեմ Մաթևոսյանը*: Նա նշեց, որ ամիակի թույլատրելի չափը 1 խմ օդի մեջ պետք է լինի 004 մգ, 004-ից մինչև 37 մգ խմ-ում հոտ չի գալիս, 37-ից հետո սկսվում է հոտը գալ, այսինքն՝ թունավորվում ենք: Իսկ մեզ մոտ միշտ հոտ է գալիս, մարդ սպանող է: Այդպես է, քանի որ ընկերությունը ֆիլտրերը չի փոխում:

Հ. Բալասյանը, ի պատասխան բնակչի, հայտնեց, որ 2015թվականին կնքված պայմանագրի համաձայն համայնքապետարանը դիմել է ՀՀ Առողջապահության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հետազոտություն կատարելու: Կատարված աշխատանքների հիման վրա նրանք պաշտոնական պատասխանել են, որ ամիակի չափը նորմաների մեջ է: Բացի դա, ըստ ստացված տվյալների, 2017թվականին <<Ելք>> խմբակցության քարտուղար Գ. Գորգիսյանը, քաղաքացի Վահան Հովսեփյանը դիմել են Բնապահպանության նախարարությանը, նրանց գրեթե նմանատիպ պատասխաններ են տվել, որ 2015-2016թվականների ընթացքում դիմում-բողոքների հիմքերով ՀՀ Բնապահպանության նախարարության մասնագետները Բյուրեղավան քաղաքի և Նուռնուս գյուղի մթնոլորտում բազմաթիվ անգամ կատարել են օդի որակի ուսումնասիրություններ, ինչի արդյունքում որևէ անգամ չեն արձանագրվել վնասակար նյութերի արտանետումների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների գերազանցումներ: Այդ տարիներին ընկերությունը ձեռք է բերել և մոնտաժել գերմանական արտադրության ֆիլտրացիոն համակարգեր:

Ելույթ ունեցավ Բյուրեղավան քաղաքի բնակիչ *Վալերի Գրիգորյանը*, մասնագիտությամբ իրավաբան: Նա դիմեց համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին՝ ասելով, որ նրանք պետք է որոշում կայացնեն՝ միջոցներ ձեռնարկելու՝ օրենքով սահմանված կարգով ընկերության գործունեությունը դադարեցնելու կամ արտադրությունը տեղափոխելու համար: Այնուհետև նշեց, որ 3 օր առաջ դիմում են ներկայացրել համայնքապետարան՝ վերոնշյալ պահանջով: Նա դիմեց համայքնի ավագանուն՝ որպես ժողովրդի ընտրյալի, պատասխանատու լինել նման որոշում կայացնելու համար: Վ. Գրիգորյանը հիշեցրեց համայնքի ղեկավարին, որ նրա կողմից 22.07.2015թ.-ին Բնապահպանության նախարարությանը ուղղված դիմումի հիման վրա

իրականացված ստուգումների արդյունքները panorama.am կայքը հրապարակել էր ամիակի պարունակությունը օդի մեջ նորմայի սահմանում չլինելու մասին: Հետո նյութը հեռացվել էր Բնապահպանության նախարարության կայքից:

Հակոբ Բալասյանը նշեց, որ 2015թվականին ակտիվ բողոքների ժամանակ 500 հոգու անունից դիմումներ էին ներկայացվել՝ աշխատատեղեր չփակվելու պահանջով, ուրեմն որոշում կայացնելիս պետք է շատ հավասարակշռված լինել:

Լ. Վարդազարյանն ասաց՝ անձամբ խոսել է «Առողջ սունկ» ընկերության տնօրենի հետ, վերջինիս հավաստմամբ ընկերության Բյուրեղավանի մասնաճյուղում աշխատում են 23 հոգի և, ծայրահեղ դեպքում, եթե արտադրությունը փակվի, նրանք կոմպոստը կներկրեն Հոլանդիայից:

Բնակիչ *Ռաֆայել Կակոյանը* հարցրեց, թե ինչ պատասխան են տվել լիազոր մարմինները Լ. Վարդազարյանի կողմից նշված CH 245-71 նորմատիվ ակտի վերաբերյալ: Հ. Բալասյանը պատասխանեց, որ երբևէ այդ հարցով չեն դիմել որևէ մարմնի: Լ. Վարդազարյանը ներկայացրեց նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի պատասխանը, որտեղ ասվում է, որ սանիտարահիգիենիկ պաշտպանիչ գոտիների բազային չափերը սահմանված են համաձայն նույն ստանդարտի:

Ռ. Կակոյանն առաջարկություն արեց որոշման մեջ անպայման օգտագործել գարշահոտություն և թունավոր արտանետումներ բառերը:

Լ. Վարդազարյանն ավելացրեց, որ Հովիկ Աբրահամյանին ուղղված դիմումը մերժվել է. պատասխանի մեջ նա հիմնավորել էր, որ վերը նշված նորմում թռչնաղբի մասին նշված չի եղել: Սակայն ստանդարտում գրված է, որ այն վերաբերվում է նաև թռչնաղբին:

Վ. Գրիգորյանը պնդեց, որ անհրաժեշտ է որոշում կայացնել, ոչ թե՝ ուղերձ: Իսկ Հ. Բալասյանը պատասխանեց, որ ավագանին իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ կարող է ընդունել ուղերձներ:

Հ. Բալասյանն ասաց՝ ուղերձը կխմբագրվի, անպայման կնշվի, որ արտադրությունը Լ. Վարդազարյանի կողմից նշված CH 245-71 նորմատիվ ակտի դրույթների խախտումներով է իրականացվում, այսինքն խախտվում է հեռավորությունը բնակավայրից: Ուրեմն պետք է կասեցնել լիցենզիան, դադարեցնել աշխատանքը:

Ելույթ ունեցավ Ամառանոցային զանգվածի բնակիչ, պրոցեսներ և ապարատներ մասնագիտությամբ, գիտությունների թեկնածու, դոցենտ *Ֆելիքս Մելիքսեթյանը*: Նրա հավաստմամբ արտադրամասը կառուցելիս պետք է չափեին մոտակա գյուղի և տան գտնվելու վայրը, որ կողմից է քամին փչում և այլն: Այլ կերպ ասած, անկախ նրանից հոտ գալիս է, թե ոչ, այդտեղ արտադրություն կազմակերպելու իրավունք չկա:

Հ. Բալասյանն ասաց, որ խոսել է ընկերության տնօրենի հետ, վերջինս համոզվել է, որ չի կարողանալու շարունակել գործունեությունը, և արտադրությունը պետք է տեղափոխվի մեկ այլ վայր: Նա ակնկալում է, որ կառավարությունն իրեն աջակցի, ժամանակ տա և տարաժամկետ վճարումով արտադրական տարածքներ հատկացնի:

Հ. Բալասյանն ասաց, որ ավագանու որոշումից դուրս մի առաջարկ ևս ունի. Վ. Գրիգորյանի հետ պայմանավորվել է, որ իրեն լիազորագիր տա համայնքին հասցված բնապահպանական վնասների համար փոխհատուցման հայց ներկայացնելու համար:

Հ. Բալասյանն առաջարկեց ընդմիջել նիստը և խնդրեց Լ. Վարդազարյանին՝ իր մոտ եղած նյութերը տրամադրել և մասնագիտական ուղղություն տալ՝ ուղերձը խմբագրելու համար:

Ժամը 17:00-ին նիստն ընդհատվեց:

Նիստը վերսկսվեց ժամը 18:00-ին:

Եզրափակիչ ելույթ

Համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու ինները անդամները նիստին ներկա են և առաջարկեց շարունակել նիստը: Նա ասաց, որ որոշումն ու ուղերձը խմբագրվել են, որն էլ ներկայացնում է ավագանու հաստատմանը:

Լսեցին

«ԱՌՈՂՋ ՍՈՒՆԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի և , ելնելով Բյուրեղավան համայնքի բնակչության շահերից, նրանց կողմից բողոքի ակցիաների միջոցով առաջ քաշած Բյուրեղավան համայնքում «Առողջ սունկ» ընկերության գործունեության արդյունքում առաջացող գարշահոտության վերացման անհրաժեշտությունից՝ համայնքի ավագանին որոշում է

1.Ընդունել ուղերձ ուղղված Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 43-Ա/

Հավելված
Բյուրեղավան համայնքի ավագանու
2018 թվականի մայիսի 25-ի N 43-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

ՈՒՂԵՐՁ

Հարգարժան պարոն վարչապետ

Ելնելով Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան և Նուռնուս բնակավայրերի բնակչության շահերից՝ դիմում ենք Ձեզ խնդրանքով՝

1. Խնդրում ենք կասեցնել «Առողջ սունկ» ընկերության կոմպոստի արտադրության համար տրված գործունեության լիցենզիան, քանի որ այն տրվել է ՀՀ 245-71 նորմատիվ ակտի դյույթների խախտումներով.

   1)Համաձայն նշված դրույթի 2-րդ կետի 2.4 ենթակետի՝ հստակ նշվում է, որ նման ձեռնարկությունները չպետք է տեղակայվեն գերակա քամիների վարդի ուղղությամբ, եթե այն տանում է դեպի բնակելի տներ: Այնինչ «Առողջ սունկ» ընկերության Բյուրեղավանի մասնաճյուղի «Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ» փաստաթղթով նույնիսկ հստակ նշվում է, որ գերակա քամիների բույրը հյուսիս-արևելյան է, այսինքն՝ անմիջապես ազդում է ոչ միայն մոտակա տների, այլև Բյուրեղավան քաղաքի վրա, ինչը և հանդիսանում է խախտում նշված նորմի:

   2)Ավելին՝ տվյալ արտադրության և բնակելի տարածքների միջև պետք է լինի 1000 մետր հեռավորություն, որը պետք է զբաղեցնի սանիտարա-պաշտպանիչ տարածք: Հատուկ դեպքերում այն կարող է հասնել մինչև 3000 մետրի, եթե գոյություն ունի անբարենպաստ քամիների բույր, ինչը նույնպես առկա է: Այս նորմը ամրագրված է կենդանական ծագումով թափոնների վերամշակման արտադրությունների համար նախատեսված 1 դասակարգման մեջ: Իրականում «Առողջ սունկ» Բյուրեղավանի մասնաճյուղի հեռավորությունը բնակելի տներից սկսվում է մոտ 170 մետրից, նորմատիվ պահպանման դեպքում սանիտարա-պաշտպանիչ գոտին պետք է տատանվի այգեգործական թաղամասերից մինչև Բյուրեղավան քաղաքի վերջ, Նոր Գեղի համայնք:

   Ուզում ենք նշել նաև, որ կոմպոստի արտադրությունը ներառված է վերոհիշյալ նորմում դասակարգման մեջ:

2. Ելնելով կոմպոստի արտադրության կարևորությունից, ընկերության կողմից պետական

բյուջեին վճարվող զգալի հարկերից և աշխատատեղերի պահպանման կարևորությունից՝ աջակցել ընկերության ղեկավարությանը այն տեղափոխելու բնակավայրերից հեռու այլ վայր՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գարշահոտության առկայությունը առաջացնում է ազգաբնակչության մշտական դժգոհությունը:

Առդիր՝ հիմնավորող նյութերը 5 (հինգ) թերթից:

Օրակարգի հարցը սպառվեց:

Ավագանու նիստը հայտարարվեց ավարտված:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԳԵՈՐԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ _____

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ _____

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ _____

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՀԱՅԿ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ